

## Գլուխ տասնմեկ

Մի անգամ Գ.-ն ասեց:

“Ինձ հաճախ են հարցեր տալիս տարբեր տեքստերից, գլուխներից կապված Ավետարանի հետ: Իմ կարծիքով դեռ ժամանակը չի եկել խոսելու Ավետարանի մասին: Ավետարանի մասին խոսելու համար շատ ավելի խորը գիտելիքներ են հարկավոր: Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ մեր գրույցների թեման կվերցնենք Ավետարանից: Դրա շնորհիվ մենք կկարողանաք դրանք ճիշտ օգտագործել և ամենակարևորը՝ հասկանալ, որ մեզ բոլորիս հայտնի շատ տեքստերում ամենակարևոր մասերը սովորաբար բացակայում են:

Եկեք անդրադառնանք այն խոսքին, որ սերմը պիտի մեռնի նորից ծնվելու համար: Երբ հացահատիկը ընկնում է հողին այն մահանում է: Բայց եթե այն մահանա, ավելի շատ բերք կտա:

Այս բառերը շատ տարբեր նշանակություններ ունեն և մենք դրանք դեռ բազմիցս կվերադառնանք: Բայց նախ և առաջ հարկավոր է հասկանալ, թե ինչպես է այն կապված մարդու հետ: Կա աֆորիզմների մի գիրք, որը սակայն երբեք չի հրատարակվել և թերևս չի էլ հրատարակվի: Ես այս գրքի մասին նշել եմ, երբ մենք խոսում էինք գիտելիքի նշանակության մասին և ես մի աֆորիզմ եմ մեջբերել այդ գրքից կապված մեր թեմայի հետ: Գիրքը ասում է. “Մարդը կարող է ծնվել, բայց ծնվելու համար նա նախ և առաջ պիտի մեռնի, իսկ մեռնելու համար նա պիտի սկզբից արթնանա”: Մեկ ուրիշ տեղ այն ասում է. “Երբ մարդը արթնանա, այդժամ նա կարող է մահանալ: Երբ նա մահանա, նա կարող է ծնվել”: Այժմ մենք պետք է հասկանանք, թե ինչ է սա նշանակում:

Արթնանալ, մահանալ, ծնվել՝ սրանք երեք իրար հաջորդող փուլեր են: Եթե ուշադիր ուսումնասիրենք Ավետարանը, ապա բազմաթիվ հղումներ կգտնեք, որոնք վերաբերում են “ծնվելու” հավանականությանը, որոշ հղումներ “մեռնելու” կարիքի մասին, ինչպես նաև “արթնանալու” (Զգուշացիր, քանզի չգիտես օրը և ժամը) և այլն: Բայց մարդու այս երեք հանարավորությունները՝ արթնանալը կամ չքնելը, մահանալը և ծնվելը, կապակցված չեն միմյանց հետ: Այնուամենայնիվ, խնդիրը հենց սա է: Եթե մարդ մահանում է առանց արթնանալու, նա չի կարող նորից ծնվել: Եթե մարդ ծվնում է առանց մահանալու, նա կարող է այդ կերպ դառնալ անմահ: Այսպիսով, այն փաստի շնորհիվ, որ նա չի մահացել, նա չի կարող ծնվել. քանի որ նա դեռ չի արթնացել, նա չի կարող մահանալ, իսկ եթե նա ծնվի առանց մեռնել, նա այլևս մահկանացու չի կարող լինել:

Էջ 218

Մենք բավականին շատ խոսեցինք “ծնվելու” իմաստի մասին: Այն կապված է նոր էության, անհատականության և յուրօրինակ “ես”-ի ձևավորման հետ: Այնուամենայնիվ, դրան հասնելու համար մարդ պետք է սկզբից մահանա, այսինքն նա պետք է նախ և առաջ իրեն ձերբազատի բազմաթիվ պիտակներից և բնորոշումներից, որոնք իրեն պահում են այն կետում, որտեղ որ գտնվում է: Նա իր կյանքում ամեն ինչից կախվածության մեջ է գտնվում՝ իր երևակայություններից, հիմարություններից, տառապանքներից և հավանաբար ամենաշատը իր տառապանքներից: Նա պետք է իրեն ձերբազատի այս կախվածություններից: Այս կախվածությունները իրենց մեջ ներառում են հազարավոր անպետք “ես”-եր մարդու մեջ: Այս “ես”-երը հարկավոր է վերացնել, որպեսզի այն մեծ ու ավելի կարևոր “ես”-ը կարողանա ծնվել: Բայց ինչպե՞ս կարելի է նրանց սպանել: Նրանք չեն ուզում մահանալ: Ահա այս պահին փրկության է հասնում “արթնանալը”: “Արթնանալ” նշանակում է գիտակցել մարդու ոչնչություն

լինելը, այսինքն գիտակցել մարդու կատարյալ մեխանիկական լինելը, ամբողջովին անօգնական լինելու փաստը: Այս խոսքերին ամեննին էլ պետք չէ փիլիսոփայորեն մոտենալ: Այն պետք է հասկանալ ուղղակի՝ պարզ ու կոնկրետ փաստերից, սեփական օրիկանից ելնելով: Երբ մարդը սկսում է մի փոքր ավելի լավ ճանաչել ինքն իրեն, նա տեսնում է, որ շրջապատված է շատ բաներով, որոնք իրենց սարսափեցնում են: Քանի դեռ մարդը սարսափած չէ ինքն իրենից, նա դեռ ոչինչ չգիտի իր մասին: Երբ մարդը տեսնում է մի բան, որը իրեն սարսափեցնում է, նա որոշում է վերջ տալ դրան, ձերբազատվել դրանից: Այնուամենայնիվ, ինչքան էլ նա ջանքեր է թափում, զգում է, որ առաջվա նման ամեն ինչ նույնն է: Այսժամ նա գիտակցում է իր կարևորությունը, իր անօգնական լինելը և իր ոչնչությունը: Կամ նորից, երբ նա ճանաչի ինքն իրեն, զգում է, որ ոչ մի սեփական բան չունի, որոնք համարում էր իրենը. նրա հայացքները, մտքերը, թուլությունները, ճաշակը, սովորությունները, նույնիսկ սխալներն ու բացթողումները իրենը չեն, այլ ստեղծվել են իր երևակայության արդյունքում, կամ էլ ամբողջությամբ վերցվել են ինչ-որ մի տեղից: Այս ամենը գիտակցելով՝ մարդը կարող է ընդունի իր ոչնչությունը: Եվ ընդունելով իր ոչնչությունը՝ մարդը տեսնում է ինքն իրեն այնպես, ինչպես որ կա, ոչ թե մի պահ, մի որոշ ժամանակ, այլ ընդհանրապես՝ առանց երբևէ մոռանալու դրա մասին:

Ոչնչություն լինելու շարունակական գիտակցումը և այն, որ նա կատարյալ անօգնական է, վերջիվերջո կտան մարդուն խիզախություն “մահանալու”, այսինքն մահանալ ոչ թե հոգեպես կամ իր գիտակցություններում, այլ իրականում մահանալ և այսպիսով մեկընդմիջտ ձերբազատվելով այն որակումներից, որոնք հարկավոր չեն իր ներքին զարգացման համար կամ էլ իր զարգացմանը խոչընդոտում են: Այս որակումները առաջին հերթին այն բոլոր “կեղծ եսերն” են, այնուհետև այն բոլոր վերացական մտքերը անհատականության, կամքի, գիտակցության, որևէ բան անելու ունակության, իր ուժի, նախաձեռնության, նպատակասլացության և այլնի մասին:

Որևէ բան մշտապես տեսնելու համար մարդ նախ և առաջ պետք է այն կարողանա գոնե մի պահ տեսնել: Բոլոր նոր հնարավորությունները և գիտակցելու ունակությունները գրեթե նույն ճանապարհով են ձեռք բերվում: Սկզբից նրանք միայն մի ակնթարթ են երևում: Հետո նրանք ավելի հաճախ են երևում ու ավելի երկարատև միայն շատ ջանք գործադրելուց հետո նրանք դառնում են մշտական: Նույնն էլ վերաբերում է “արթնանալուն”: Հնարավոր չէ միանգամից ամբողջովին “արթնանալ”: Մարդը պետք է սկզբից “արթնանա” գուտ որոշ ժամանակով: Բայց նա մեծ ջանքերի շնորհիվ բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելուց հետո, վերջնական որոշում պետք է կայացնի վեջնականապես “մահանալ”, որից հետո հետ ճանապարհ այլևս չկա: Դանդաղ և աստիճանաբար “արթնանալու” գործընթացից հետո մարդու համար այն կարող է չափազանց դժվար լինել, նույնիսկ անհնարին:

Մարդը հազարավոր խոչընդոտների է հանդիպում “արթնանալու” ժամանակ, որոնք նրան պահում են իր երազների մեջ: Գիտակցաբար “արթնանալու” համար պետք է իմանալ այն ուժերի մասին, որոնք մարդուն պահում են քնի կացության մեջ: Նախ և առաջ պետք է գիտակցել, որ այն քունը, որում մարդ գտնվում է, սովորական քուն չէ, այլ հիպնոտիկ: Մարդը հիպոնոսացված է և այս հիպնոտիկ վիճակը շարունակաբար ավելի է ուժեղանում և ամրապնդվում իր մեջ: Ոմանք կարող են մտածել, թե կան ուժեր, որոնց համար ձեռնտու է մարդկանց պահել հիպնոսի մեջ և չթողնել, որ նրանք տեսնեն ճշմարտությունը և այն իրավիճակը, որում իրենք գտնվում են:

Արևելքից եկած մի հեքիաթ գոյություն ունի, որը պատմում է մի շատ հարուստ հրաշագործ կախարդի մասին, որը շատ ոչխարներ ուներ, բայց միևնույն ժամանակ շատ ժլատ

էր: Նա չէր ուզում հովիվներ վարձել, ոչ էլ ուզում էր ցանկապատել արոտավայրը, որտեղ ոչխարները արածում էին: Ոչխարները շատ հաճախ թափառելով կորում էին անտառներում կամ էլ ձորն էին ընկնում և այլն, և ամենակարևորը՝ նրանք փախչում էին, որովհետև գիտեին, որ կախարդին իրենց միան ու կաշին է հարկավոր, և դա նրանց դուր չէր գալիս: Վերջապես կախարդը ելքը գտավ: Նա հիպնոսացրեց իր ոչխարներին և նրանց ներշնչեց, որ իրենք անմահ են և որ իրենց ընդհանրապես ցավ չի պատճառվում, երբ իրենց մորթում են, ընդհակառակը՝ դա իրենց համար շատ օգտակար է և նույնիսկ հաճելի: Այնուհետև, նա ոչխարներին ներշնչեց, իբր ինքը շատ լավ տեր է, ով այնքան շատ սիրում է իր ոչխարների հոտը, պատրաստ է ամեն ինչի: Այնուհետև նա համոզեց ոչխարներին, որ ինչ էլ որ պահատի իրենց հետ, դա չի կատարվի հենց այդ օրը, միգուցե մեկ այլ օր, բայց ոչ հենց այդ օրը, այնպես որ ոչխարները դրա մասին մտահոգվելու կարիք չունեն: Նա նաև ներշնչեց ոչխարներին, որ նրանք ընդհանրապես ոչխարներ էլ չեն: Մի քանիսին նա ասեց, որ առյուծներ են, մնացածին որ նրանք արծիվներ են, մարդ և նույնիսկ կախարդներ: Այս ամենից հետո ոչխարների հետ կապված նրա հոգսերը հողս ցնդեցին: Նրանք այլևս չէին փախչում, այլ համբերատար սպասում էին այն օրվան, թե երբ կախարդին հարկավոր կլինի իրենց միսը և կաշին:

Այս հեքիաթը մարդու իրավիճակի դրսևորման շատ վառ օրինակ է:

Միստիկ գրականության մեջ հավանաբար հանդիպել եք “կունդալինի” արտահայտությանը, կամ էլ “կունդալինիի կրակ”, “կունդալինիի օձ”: Այս արտահայտությունը սովորաբար օգտագործում են, երբ ի նկատի ունեն որևէ տարօրինակ ուժ, որ կա մարդու մեջ, որը կարող է արթնանալ: Սակայն ոչ մի տեսություն չի կարող տալ կունդալինիի բացատրությունը: Երբեմն այն կապում են սեքսի հետ, դրանից գոյացած էներգիայի հետ, այսինքն այդ էներգիան կարելի է օգտագործել այլ նպատակներով: Վերջինս միանգամայն սխալ բացատրություն է, քանի որ կունդալինին կարող է ամեն ինչում լինել: Եվ բացի դրանից, կունդալինին ինչ-որ ցանկալի բան չէ, կամ օգտակար՝ մարդու զարգացման համար: Շատ հետաքրքիր է, թե ինչպես են միստիկները այս բառը գտել, բայց ամբողջովին իմաստը փոխել են՝ դարձնելով մի շատ վտանգավոր և ահավոր բանից բաղձալի մի երևույթի, որին սպասում են, ինչպես օրհնության:

Իրականում Կունդալինին երևակայության, պատկերացումների ուժն է, որը կարծես թե իրականում տեղի է ունենում: Երբ մարդը գործելու փոխարեն երագում է, երբ իր երագանքները փոխարինում են իրականությանը, երբ մարդը պատկերացնում է, թե ինքը արծիվ է կամ առյուծ կամ կախարդ, այստեղ Կունդալինիի ուժն է իր վրա ներգործում: Կունդալինին կարող է ներգործել բոլոր կենտրոնների վրա և դրա ազդեցության տակ կենտրոնները կարող են առանց իրականության, զուտ երևակայականով իրենց բավարված զգալ: Ոչխարը, որն իրեն առյուծ կամ կախարդ է համարում, ապրում է Կունդալինիի ազդեցության տակ:

Կունդալինին մի ուժ է, որը ազդում է մարդու վրա, որպեսզի պահի նրան նույն վիճակում: Եթե միայն մարդիկ կարողանային տեսնել իրենց իրական վիճակը և գիտակցեին այդ ամենի սարսափելի ազդեցությունը, նրանք նույնիսկ մի պահ չէին կարողանա մնալ այնտեղ: Նրանք միանգամից կսկսեին ելքի ուղիներ փնտրել և շատ շուտով կգտնեին, քանի որ ելք իսկապես կա: Բայց այս ամենը չի հաջողվում նրանց անել, քանի որ նրանք հիպնոսի վիճակում են: Կունդալինին այն ուժն է, որ նրանց պահում է հիպնոսի մեջ: “Արթնանալ” նշանակում է դուրս գալ հիպնոսից: Հենց սրանում է կայանում հիմնական դժվարությունը և սրա հետ է կապված այն իրականանալու հավանականությունը, քանի որ այդ քունը ֆիզիկական քուն չէ, և մարդը իրոք կարող է արթնանալ այդ քնից:

Տեսականորեն նա կարող է արթնանալ, բայց պրակտիկայում դա գրեթե անհնար է, քանի որ հենց արթնանա և մի պահ բացի աչքերը, այն բոլոր ուժերը որ ազդում էին իր վրա, որպեսզի նա չարթնանա, կսկսեն տասնապատիկ անգամ մեծ ուժով ազդել մարդու վրա, և նա նորից կքնի՝ շատ հաճախ նույնիսկ երազելով, որ արթնացել է կամ էլ արթնանում է:

Կան որոշակի վիճակներ սովորական քնի մեջ, երբ մարդ ուզում է արթնանալ, բայց չի կարող: Նա ինքն իրեն ասում է թե արդեն արթնացել է, բայց իրականում նա շարունակում է քնել և այս վիճակը կարող է մի քանի անգամ կրկնվել մինչ նա վերջնականապես կարթնանա: Բայց հենց նա արթնանա, գտնվում է մի ուրիշ վիճակում: Հիպնոտիկ քնի դեպքում դա հակառակն է. ոչ մի կոնկրետ բնութագիր չկա ո՛չ այդ վիճակի սկզբնական, ո՛չ էլ վերջնական վիճակի մասին: Տվյալ դեպքում մարդը չի կարող ինքն իրեն խափել, որպեսզի համոզվի, որ քնած չէ: Եվ եթե Աստված չանի մարդը որևէ բան իմանա Կունդալինիի մասին, ապա այն ամբողջովին կվերածվի երևակայության և երազի:

Միայն այն մարդը, ով ամբողջովին գիտակցում է արթնանալու դժվարությունը, կարող է հասկանալ, թե որքան երկար ու քրտնաջան աշխատանք է հարկավոր կատարել արթնանալու համար:

Ընդհանրապես, ի՞նչ է հարկավոր քնած մարդուն արթնացնելու համար: Մի լավ ցնցում է հարկավոր: Բայց երբ մարդ քնած է մեկ ցնցումը բավական չէ: Ցնցումների մի երկար շղթա է հարկավոր: Հետևաբար հարկավոր է մեկը, ով կկառավարի այս ցնցումները: Ես ասեցի, որ եթե մարդ ուզում է արթնանալ, նա պետք է վարձի մեկին, ով նրան կթափահարի երկար ժամանակ: Իսկ ու՞մ է նա վարձելու, եթե բոլորը քնած են: Նա վարձում է մեկին, որ իրեն արթնացնի, բայց սա նույնպես քնած է: Իսկ ո՞րն է օգուտը: Այն մարդը, ով կարող է արթուն մնալ, դժվար թե համաձայնվի վատնել իր ժամանակը նման բանի վրա, քանի որ հավանաբար, նա դրանից կարևոր այլ բաներ կունենա անելու:

Արթնանալ կարելի է նաև զարթուցիչի օգնությամբ: Սակայն խնդիրը այն է, որ մարդը շատ շուտ ընտելանում է զարթուցիչի ձայնին և շուտով արդեն դրա ձայնը չի լսում: Բազմաթիվ նոր զարթուցիչներ են պետք: Ուրեմն, մարդ պիտի իրեն շրջապատի զարթուցիչներով, որոնք իրեն արթուն կպահեն: Այստեղ էլ կան որոշակի դժվարություններ: Ինչ որ մեկը պիտի լարի զարթուցիչները: Դրանք լարելու համար պետք է հիշել դրանց մասին, իսկ հիշելու համար պիտի հաճախակի արթնանա: Իսկ ամենասարսափելին այն է, որ մարդ շուտով ընտելանում է զարթուցիչների ձայնին և դրանց ձայնի տակ սկսում է նույնիսկ ավելի լավ քնել: Դրա համար զարթուցիչները պետք է հաճախակի փոխել և նոր զարթուցիչներ ստեղծել: Ժամանակի ըթացքում սա կարող է մարդուն օգնել արթնանալ: Սակայն քիչ հավանական է, որ մարդը այդ ամբողջ աշխատանքը կատարի առանց կողմնակի օգնության՝ զարթուցիչները լարի, նոր զարթուցիչներ հնարի, հները փոխարինի նորերով: Շատ ավելի հավանական է, որ նա գործի կեսից կքնի և կսկսի երազել, թե ինքը նոր զարթուցիչներ է հնարում, լարում և փոխարինում է դրանք նորերով և այդ ամենի ազդեցության տակ շարունակի քնել:

Այսպիսով՝ արթուն մնալու համար բազմաթիվ ջանքեր է հարկավոր գործադրել: Ինչ որ այլ մեկը պետք է լինի, որ արթնացնի մարդուն և ուրիշ մեկը, որ հետևի նրան, ով պիտի արթնացնի մարդուն: Պետք է զարթուցիչներ ունենալ և հնարել նորերը: Սակայն որոշակի արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է, որ տարբեր մարդիկ համագործակցեն իրար հետ: Մարդը մենակ այս ամենին ոչ մի դեպքում չի կարող հասնել: Նախ և առաջ նրան օգնություն է հարկավոր: Բայց այս օգնությունը միայն նրա համար չէ: Այն մարդիկ, ովքեր ի

վիճակի են օգնել շատ թանկ են գնահատում իրենց ժամանակը և, իհարկե, կնախընտրեն օգնել միանգամից քսան-երեսուն մարդու, ովքեր ուզում են արթուն մնալ, քան միայն մեկին: Ավելին՝ ինչպես արդեն ասվեց, մարդը կարող է խաբել ինքն իրեն արթուն մնալու վերաբերյալ և երազը խառնի իրականության հետ: Եթե մի քանիսը միաժամանակ պայքարեն քնելու դեմ, նրանք կարողն են արթնացնել իրար: Շատ հաճախ կարող է պատահել այնպես, որ մարդկանցից քսանը քնած լինեն, իսկ քսանմեկերորդը արթուն լինի և արթնացնի մնացածին: Նույն իրավիճակն է նաև զարթուցիչների հետ: Մեկը մի զարթուցիչ է սարքում, մյուսը՝ մեկ այլ զարթուցիչ: Այնուհետև, նրանք փոխանակվում են զարթուցիչները: Բոլորը միասին նրանք կարող են շատ օգնել իրար, իսկ առանց այդ օգնության մարդը մենակ ոչ մի բանի չի կարող հասնել:

Հենց այդ պատճառով այն մարդը, ով ուզում է արթուն մնալ, պետք է փնտրի այլ մարդկանց, ովքեր նույնպես ուզում են արթուն մնալ, և նրանք սկսեն աշխատել միասին: Սակայն շատ ավելի բարդ է անել, քան դրա մասին խոսելը, և այս ամենը կազմակերպելու համար հարկավոր են գիտելիքներ, որ սովորական մարդը կարող է և չունենալ: Այս գործը պետք է կազմակերպել և այն պետք է ունենալ ղեկավար: Միայն այդ ժամանակ այն կարող է տալ ցանկալի արդյունք: Առանց այս պայմանների հնարավոր չէ հասնել որևէ արդյունքի, որքան էլ, որ ջանքեր գործադրվեն: Մարդիկ կարող է տանջեն իրենց, բայց այս տանջանքներն անգամ իրենց արթուն չպահեն: Շատերի համար սա ամենադժվար հասկանալի պահն է: Յուրաքանչյուրը առանձին վերցրած նրանք կարող է պատրաստ լինեն ջանքեր չինայելու և մեծ զոհողությունների գնալու: Բայց եթե նրանց առաջին զոհողությունների և ջանքերի գնով արածին ոչ մեկը չենթարկվի, ոչինչ չի կարող ստիպել նրանց ենթարկվել մյուսներին: Ոչ ոք չի ուզում հակված լինել այն մտքին, որ իրենց զոհողությունները և ջանքերը ապարդյուն են եղել:

Այս աշխատանքը պետք է կազմակերպվի: Այն կարող է միայն կազմակերպվել այն մարդու կողմից, ով գիտի դրա խնդիրները, նպատակները, մեթոդները, մի մարդու, ով ժամանակին ինքն է անցել այդպիսի գործընթացի միջով: Մարդը սովորաբար սկսում է իր ուսուցումը փոքր խմբերում: Այս խմբերը հիմնականում կապված են մի շարք նմանատիպ այլ խմբերի տարբեր մակարդակների վրա, որոնք միասին վերցված կարող են կոչվել “նախապատրաստական դպրոց”:

Այս խմբի առաջին և ամենակարևոր հատկանիշն այն է, որ խմբի անդամները ընտրված չեն իրենց իսկ ցանկությամբ, այլ ընտրված են խմբի ղեկավարի կողմից, ով ընտրում և որոշում է թե նրանցից ովքեր կարող են միմյանց օգտակար լինել: Ոչ մի խումբ չի կարող աշխատել առանց ուսուցչի: Խմբի՝ սխալ ուսուցչի հետ աշխատանքը կարող է միայն բացասական արդյունքներ տալ:

Խմբի աշխատանքի հաջորդ կարևոր հատկանիշն այն է, որ խմբերը կարող են ունենալ որոշակի ընդհանուր նպատակ, սակայն խմբի անդամները, ովքեր աշխատում են այդ նպատակի համար, կարող են չիմանան դրա մասին, և այն անգամ հնարավոր չէ նրանց բացատրել մինչև իրենք ինքնուրույն չհասկանան դրա էությունը և դրա հետ կապված գաղափարները: Բայց այդ անհայտ նպատակը, որին ծառայում են, հանդիսանում է իրենց կանոնավոր աշխատանքի երաշխիքը: Նաև և առաջ խմբի անդամները պետք է հասկանան ուսուցչի նպատակը: Երբ այն ընկալվում է՝ անգամ սկզբում ոչ լիարժեք, նրանց աշխատանքը դառնում է ավելի գիտակից և արդյունավետ: Սակայն, ինչպես արդեն նշել եմ, շատ հաճախ ուսուցչի նպատակը հնարավոր չէ բացատրել ի սկզբանե: Հետևաբար, այն մարդը որը սկսում է աշխատել խմբում նախ և առաջ

պետք է զբաղվի ինքնակրթությամբ: Ինքնակրթման գործընթացը կարող է տեղի ունենալ միայն ճիշտ կազմավորված խմբերում: Մենակ մարդը չի կարող տեսնել ինքն իրեն, բայց եթե մի շարք մարդիկ հավաքվեն այս նպատակի շուրջ, նույնիսկ ակամա կսկսեն իրար օգնել: Մարդուն շատ բնորոշ է ավելի հեշտությամբ տեսնել դիմացինի սխալները, քան իր իսկ կատարած սխալները: Ինքնակրթման ճանապարհին նա կհասկանա, որ մյուսների մեջ տեսած սխալները իրեն նույնպես հատկանշական են: Շատ սխալներ կան, որոնք նա չի կարող տեսնել իր մեջ, սակայն նա սկսում է դրանք տեսնել ուրիշների մեջ: Բայց, ինչպես արդեն նշեցի, այս դեպքում նա գիտակցում է, որ ինքը նույնպես ունի այդ խնդիրները: Այսպիսով, խմբի մնացած անդամները հայելի են հանդիսանում մարդու համար, որպեսզի նա կարողանա տեսնել իր իսկ սխալները: Բայց, իհարկե, ուրիշների սխալները տեսնելով՝ մարդը պետք է գիտակցի իր իսկ սխալները, այլ ոչ թե պարզապես տեսնի ուրիշներինը, նա պետք է ինքն իրեն շատ քննադատաբար մոտենա և ազնիվ լինի ինքն իր նկատմամբ:

Նա պետք է միշտ հիշի, որ ինքը մենակ չէ, որ նրա մի մասը այն մարդն է, որ ուզում է արթնանալ, իսկ մյուսը ասենք “Իվանովը”, “Պետրովը” կամ “Զախարովը” չեն ուզում ոչ մի դեպքում արթնանալ և ում պետք է ուժի միջոցով արթնացնել:

Խումբը հիմնականում որոշ “ես”-երի համաձայնությունն է՝ պայքարելու համար «Իվանովների», «Պետրովների» կամ «Զախարովների» դեմ, այսինքն՝ իրենց կեղծ ես-երի դեմ:

Որպես օրինակ վերցնենք Պետրովին: Պետրովը բաղկացած է երկու մասից՝ «ես-ից» և «Պետրովից»: Այստեղ Պետրովն է գլխավորում: Ենթադրենք կա քսան մարդ, և եթե այս քսան «եսերն» էլ սկսեն պայքարել միայնակ Պետրովի դեմ, նրանք կարող են ավելի ուժեղ լինել, քան Պետրովը: Վաղ թե ուշ նրանք կխաթարեն Պետրովի քունը և նա այլևս չի կարողանա այդպես հանգիստ քնել, ինչպես առաջ: Ահա սա է ամբողջ իմաստը:

Ավելին՝ ինքնակրթման ընթացքում մարդը նյութեր է հավաքում իր ինքնահետազոտության արդյունքում, իսկ քսան հոգանոց խմբում նրանք քսան անգամ ավելի շատ նյութեր կունենան և խմբի յուրաքանչյուր անդամ կկարողանա օգտվել այս նյութերից, քանի որ յուրաքանչյուր խմբի գործունեության իմաստը հենց փորձի և տվյալների փոխանակման մեջ է:

Երբ խումբը կազմվում է, դրա անդամներից յուրաքանչյուրի առջև դրվում են որոշակի պայմաններ: Առաջին հերթին հիմնական պայմաններ են որոշվում ամբողջ խմբի համար, այնուհետև՝ անհատական խմբի անդամներից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին:

Խմբի առջև դրված հիմնական պայմաններից է հետևյալը. նախ և առաջ խմբի բոլոր անդամներին բացատրվում է, որ այն ամենն, ինչ իրենք սովորեն կամ լսեն խմբի ներսում պետք է գաղտնի մնա ոչ միայն խմբին ադնամակցելու ժամանակ, այլ ընդմիջո: Սա պարտադիր պայման է, որն ի սկզբանե պետք է պարզ լինի բոլորին: Այլ կերպ ասած, նրանք պետք է հստակ հասկանան, որ փորձ չի արվում գաղտնիացնել բաներ, որոնք իրականում գաղտնի չեն, ոչ էլ փորձ է արվում հարկադրաբար նրանց զրկել իր մտերիմների կամ ընկերների հետ մտքեր փոխանակելուց:

Այս սահմանափակման իմաստն այն է, որ իրենք ի վիճակի չեն ճիշտ փոխանցել այն մտքերը, որոնք արտահայտվում են խմբերում: Նրանք շուտով իրենց անձնական փորձից կհասկանան, թե որքան ջանքեր, ժամանակ և բացատրական աշխատանքներ են հարկավոր ճիշտ ըմբռնելու համար այն, ինչ ասվում է խմբերում: Շուտով նրանք կգիտակցեն, որ իրենց համար բավականին դժվար կլինի ճիշտ փոխանցել իրենց սովորածը ընկերներին: Միննույն

Ժամանակ իրենք նաև սկսում են հասկանալ, որ իրենց ընկերներին սխալ մտքեր փոխանցելով, զրկում են նրանց իրենց աշխատանքի վերաբերյալ որևէ բան հասկանալու հնարավորությունից, այսինքն՝ իրենք իրենց համար լրացուցիչ տեղեկություններ ու խնդիրներ են ստեղծում: Եթե մարդ, չնայած այս ամենին, փորձի փոխանցել այն մտքերը որոնք ինքը լսում է խմբերում, նա միանգամից կհասկանա, որ այդ փորձը միանգամայն անսպասելի և տեղի արդյունք է տալիս: Մարդիկ կամ սկսում են վիճել իր հետ և չեն ցանկանում լսել իրեն, արտահայտում են իրենց տեսակետները, կամ էլ սխալ են մեկնաբանում իր ասածները՝ դրանց տալով միանգամայն այլ իմաստ: Տեսնելով և հասկանալով իր փորձի անարդյունավետ լինելը՝ մարդը սկսում է հասկանալ այդ սահմանափակման իմաստը:

Այս սահմանափակումների մեկ այլ և ոչ պակաս կարևոր կողմն էլ այն է, որ հիմնականում շատ դժվար է լուռ մնալ իրեն հետաքրքրող հարցերի շուրջ: Մարդն ուզում է խոսել դրանց մասին ուրիշների հետ, կիսել իր «մտքերը», ինչպես որ նա դրանց կոչում է: Դա իր բնական ցանկություններից է և այս դեպքում ամենաբարդ բանը ինքն իրեն զսպելն է: Բայց եթե նա գիտակցի այս հանգամանքը, դա կլինի իր համար ամենաարդյունավետ միջոցը կամքի ուժ ձևավորելու համար: Միայն այն մարդը, ով կարող է լուռ մնալ, երբ հարկավոր է, կարող է կառավարել ինքն իրեն:

Շատերի համար, այնուամենայնիվ, բարդ է համակերպվել իրենց՝ ոչ տեղին խոսելու փաստի հետ, մանավանդ այն մարդկանց համար, ովքեր իրենց լուրջ և հասուն մարդ են համարում, կամ էլ լռակյաց, մենակություն սիրող են: Այդ իսկ պատճառով սա չափազանց կարևոր պայման է: Եթե մարդ դրա մասին միշտ հիշի և հետևի, ապա կսկսի տեսնել իր այնպիսի կողմերը, որոնց մասին երբեք չի էլ իմացել:

Խմբի անդամներից պահանջվող հաջորդ պայմանն այն է, որ նրանք պետք է խմբի ղեկավարին պատմեն ամբողջ ճշմարտությունը: Սա նույնպես հարկավոր է ճիշտ հասկանալ: Շատերը չեն գիտակցում, թե ինչքան մեծ տեղ է զբաղեցնում իրենց կյանքում սուտը, կամ էլ նույնիսկ ճշմարտությունը թաքցնելը: Մարդիկ անկարող են անկեղծ լինել ուրիշների և անգամ իրենք իրենց հետ: Նրանք նույնիսկ չեն էլ գիտակցում, որ անկեղծ լինելը, երբ որ դա անհրաժեշտ է, աշխարհում ամենադժվար բանն է: Նրանց պատկերացումով ճշմարտությունը ասելը կամ չասելը, անկեղծ լինել կամ չլինելը կախված է հենց իրենցից: Դրա համար պետք է այն սովորել և սովորել հենց ուսուցչի հետ աշխատելու ժամանակ: Ուսուցչին ակնհայտ սուտ ասելը, անկեղծ չլինելը կամ նույնիսկ ինչ-որ բան թաքցնելը խմբում իրենց ներկայությունը դարձնում է միանգամայն անօգուտ և ավելի վատ է, քան ուսուցչի հետ կամ ներկայությամբ կոպիտ կամ անքաղաքավարի լինելը:

Խմբի անդամներից պահանջվող հաջորդ պայմանն այն է, որ հիշեն իրենք իրենց, թե ինչի համար են ընդգրկվել խմբի մեջ: Նրանք եկել են սովորելու և աշխատելու իրենց վրա. սովորելու և աշխատելու ոչ թե այնպես, ինչպես իրենք են դա պատկերացնում, այլ ինչպես իրենց կասեն: Եթե նրանք մտել են խմբի մեջ և սկսում են անվստահություն ցուցաբերել ուսուցչի նկատմամբ, քննադատել նրա արարքները, կարծել, որ իրենք ավելի լավ են հասկանում, թե ինչպես պետք է խումբը ղեկավարվի, և մանավանդ հաշվի չեն առնում ուսուցչի ասածը, սկսում են չհարգել նրան, կոպիտ են վարվում, ցուցաբերում են անհամբերություն, հակված են լինում վեճերի, սա միանգամից բացառում է միմյանց հետ աշխատելու հավանականությունը, քանի որ աշխատել հնարավոր է միայն այն պայմանով, եթե մարդիկ գալիս են սովորելու, այլ ոչ թե սովորեցնելու:

Երբ մարդը սկսում է չվստահել իր ուսուցչին, ուսուցիչը այլևս պետք չի լինում իրեն, իսկ ինքը՝ ուսուցչին: Այս դեպքում ավելի լավ է, որ նա ուրիշ ուսուցիչ փնտրի կամ էլ փորձի աշխատել առանց ուսուցչի: Դա միևնույն է իրեն օգուտ չի տա, բայց գոնե ավելի քիչ վնաս կտա քան խաբելը, ինչ-որ բան թաքցնելը, ընդդիմանալը կամ ուսուցչին չվստահելը:

Ի լրումն այս հիմնական պահանջներին՝ ենթադրվում է, որ խմբի անդամները պետք է աշխատեն: Եթե նրանք հաճախում են այդ խմբակը, չեն աշխատում և պարզապես պատկերացնում են, թե իրենք աշխատում են, կամ իրենց ներկայությունը խմբում աշխատել են արդեն համարում, կամ էլ ինչպես հաճախ պատահում է՝ հաճախում են խմբակ գուտ ժամանակ անցկացնելու, նոր ծանոթություններ ձեռք բերելու համար, իրենց ներկայությունը խմբում անօգուտ է դառնում: Այս դեպքում որքան շուտ նրանց հեռացնեն խմբից կամ իրենք հեռանան, այդքան ավելի լավ իրենց և խմբի համար:

Վերը նշված հիմնական պայմանները հիմք են հանդիսանում այն օրենքների համար, որոնք պարտադիր են խմբի բոլոր անդամների համար: Նախ և առաջ օրենքները կօգնեն բոլորին խուսափել խոչընդոտներից և չեն վնասի աշխատանքին, բացի այդ՝ դրանք մարդուն կօգնեն «հիշել ինքն իրեն»:

Հաճախ պատահում է, որ աշխատանքի սկզբից խմբի անդամներին դուր չեն գալիս որոշ օրենքներ: Նրանք նույնիսկ հարցնում են. «Չե՞նք կարող աշխատել առանց օրենքների»: Օրենքները անտեղի ճնշում են թվում իրենց ազատության վրա կամ էլ հոգնեցուցիչ ձևականություն են իրենց համար և ամեն անգամ օրենքների մասին հիշեցումը իրենք ընդունում են՝ որպես դժգոհություն ուսուցչի կողմից:

Իրականում օրենքները առաջին և ամենակարևոր օգուտն է, որ նրանք քաղում են աշխատանքից: Օրենքները չեն ստեղծվել իրենց հաճույքներից զրկելու համար կամ էլ խոչընդոտ հանդիսանալու, այլ ամեն ինչ ավելի հեշտությամբ անելու համար: Օրենքները որոշակի նպատակ են հետապնդում՝ ստիպում են խմբի անդամներին իրենց պահել այնպես, ինչպես հարկն է, այսինքն՝ եթե իրենք իրենց հիշեին և գիտակցեին, թե ինչպես պետք է իրենց պահեն այլ մարդկանց հետ աշխատանքից դուրս, աշխատանքի շրջանակներում և ուսուցչի հետ: Եթե իրենք կարողանային իրենք իրենց հիշել և գիտակցել այս ամենը, օրենքների կարիքը այլևս չէր զգացվի: Բայց քանի որ իրենք չեն կարող դա անել աշխատանքի սկզբում, օրենքները պարտադիր պայման են, չնայած որ դրանք երբեք չեն կարող լինել հեշտ, հաճելի կամ հարմարավետ: Հակառակը՝ նրանք պետք է դժվար լինեն, տհաճ և անհարմար, այլապես դրանք երբեք չեն հասնի իրանց նպատակին: Օրենքները հենց այն զարթուցիչներն են, որ արթնացնում են մարդուն: Սակայն մարդը մի պահ աչքերը բացելով դժկամությամբ հարցնում է, «Մի՞ թե մարդ չի կարող արթնանալ առանց զարթուցչի:»

Հիմնական օրենքներից բացի կան նաև որոշակի անհատական պայմաններ, որոնք առաջադրվում են ամեն մեկին առանձին և հիմնականում կապված են իր «հիմնական թուլության» կամ «հիմնական հատկանիշի» հետ: Սա պետք է բացատրել ավելի մանրամասն:

Յուրաքանչյուր մարդ ունի որոշակի հատկանիշ, որը կենտրոնական դիրք է գրավում: Այն ասես մի առանցք է, որի շուրջ պտտվում է իր «կեղծ անհատականությունը»: Յուրաքանչյուր մարդու անհատական աշխատանքը պետք է ուղղված լինի պայքարելու այս հիմնական սխալի դեմ: Սա է պատճառը, որ աշխատանքի հիմնական օրենքներ չեն կարող գործել, իսկ այն դեպքերում, երբ կիրառվում են հիմնական օրենքներ, դրանք ոչնչի չեն բերում կամ էլ վնաս են տալիս: Ինչպե՞ս կարող են հիմնական օրենքներ լինել: Այն ինչ կարող է օգուտ տալ մեկին,



կվնասի մյուսին: Մեկը սիրում է շատ խոսել. ուրեմն՝ նա պետք է սովորի լուռ մնալ: Մյուսը լուռ է, երբ պետք է խոսի. այսպիսով՝ նա պետք է սովորի խոսել: Ահա այսպես է յուրաքանչյուր դեպքում: Հիմնական օրենքները խմբի ներսում վերաբերում են բոլորին: Առանձին ցուցումները կարող են միայն լինել անհատական: Այս դեպքում նույնպես որպես օրենք մարդը միայնակ ի վիճակի չէ գտնել իր հիմնական բացասական հատկանիշը, սխալը: Ուսուցիչը պետք է նրան ճիշտ ուղղորդի և ցույց տա իր սխալը, ինչպես նաև ասի, թե ինչպես պայքարել դրա դեմ: Բացի ուսուցչից ոչ մեկը չպետք է այդ անի:

Հիմնական սխալի հայտնաբերման և դրա դեմ պայքարելու համար է ստեղծված յուրաքանչյուրի անհատական ուղին, սակայն նպատակը բոլորի համար նույնն է, այն է՝ գիտակցել իր ոչնչությունն լինելը: Միայն այն ժամանակ, երբ մարդ ամբողջությամբ կգիտակցի և կհամոզվի իր ոչնչության և անզօգնական լինելու հանգամանքը, այն ժամանակ միայն նա պատրաստ կլինի աշխատանքի հաջորդ և ավելի բարդ փուլերին անցնելու:

Մինչ այժմ ասված ամեն ինչը վերաբերում էր իրական խմբերին, որոնք միմյանց հետ կապված են իրական նպատակներով, որոնք իրենց հերթին փոխկապված են այսպես ասած «չորրորդ ուղիով»: Սակայն շատ խաբկանքային ուղիներ կան, խաբկանքային խմբեր և աշխատանք: Եվ սրանք ամեննին էլ «սև մոգություն» չեն:

Դասախոսությունների ընթացքում շատ են հարցրել, թե ինչ է «սև մոգությունը» և ես միշտ պատասխանել եմ, որ չկա ո՛չ կարմիր, ո՛չ կանաչ և ո՛չ էլ դեղին մոգություն: Կան պարզապես ձևեր, այսինքն թե ինչ է պատահելու, և կա «անելու ձև»: «Անելու ձևը» հենց կախարդանքն է, և այն կատարելու միայն մեկ ձև կարող է լինել: Չի կարող երկու «անելու ձև» լինել: Սակայն կարող է արածի կեղծում լինի, ցուցադրական մասի որոշակի ձևախեղում, որը չի կարող օբյեկտիվ արդյունք տալ, այլ միայն կխաբի միամիտ մարդկանց, իրենց մեջ առաջացնելով հավատք, ցնծություն, որգևորություն և անգամ ֆանատիզմ:

Մա է պատճառը, որ ճիշտ անելու ժամանակ մարդկանց մոտ ցնծություն առաջացնել չի թույլատրվում: «Սև մոգություն» անելու էությունը հենց կայանում է մարդկանց մոտ ցնծություն առաջացնելու և նրանց թույլ կողմերը օգտագործելու մեջ: «Սև մոգությունը» ամեննին էլ չի նշանակում սատանայական կախարդանք: Ինչպես արդեն ասել եմ, ոչ ոք չի անում որևէ բան սատանայի համար կամ սատանայի հետաքրքրության շրջանակներում: Բոլորն էլ որևէ բան անելիս անում են լավի համար այնքան, որքանով որ նրանք հասկանում են: Նմանապես չի կարելի ասել որ «սև մոգությունը» անպայման պետք է հասկանալ եսասիրական ենթատեքստում, որ «սև մոգության» ժամանակ մարդը ուզում է ինչ-որ նպատակների հասնել գուտ իր համար: Մա ամեննին էլ ճիշտ չէ: «Սև մոգությունը» կարող է հետապնդել միանգամայն մարդասիրական նպատակներ, կարող է ծառայել հանուն մարդկության բարօրության և փրկության իրական և երևակայական չարից: Սակայն այժմ «սև մոգությանը» տրվում է միայն մեկ բնորոշում, այսինքն այն օգտագործվում է մարդկանց՝ առանց իրենց գիտակցելու և հասկանալու օգտագործելու կամ էլ վախի միջոցով իրենց մեջ հավատք ներշնչելու միջոցով:

Հարկ է հիշել, որ «սև մոգությունը», լինի նա լավը թե վատը, որոշակի դպրոց պետք է անցած լինի: Նա ինչ-որ բան պիտի սովորած լինի, ինչ-որ բան լսած, այսինքն՝ որոշ չափով գիտակ է: Սակայն նա պարզապես թերի կրթված անձնավորություն, ում կամ հեռացրել են դպրոցից, կամ էլ ինքն է լքել դպրոցը՝ կարծելով, որ արդեն բավականաչափ գիտելիք ունի, որ նա այնս որևէ մեկի օգնության կարիքը չունի, որ նա արդեն կարող է անկախ գործել և նույնիսկ ուղղորդել ուրիշներին: Նմանատիպ յուրաքանչյուր փորձ կարող է միայն սուբյեկտիվ արդյունք

տալ, այսինքն՝ այն կարող է միայն ամրապղնել քունը դրանից հանելու փոխարեն: Այնուամենայնիվ, «սև մոգությունից» էլ կարելի է որոշ բան սովորել, չնայած որ դա սխալ է: Նա երբեմն կարող է պատահաբար ճիշտն ասել: Սա է պատճառը, որ ես ասում եմ, թե «սև մոգությունից» էլ ավելի վատ բաներ կան: Դրանք են տարբեր գաղտնի համայնքներն ու խմբակները: Նրանց ուսուցիչները ոչ միայն դպրոցում չեն եղել, այլ նրանք նույնիսկ չեն էլ ճանաչում որևէ մեկին, ով հաճախել է դպրոց: Նրանք պարզապես կապկում են անում: Սակայն այդ աշխատանքի իմիտացիան նրանց շատ մեծ հաճույք է պարգևում: Մեկը մտածում է, որ նա ուսուցիչ է, մնացածը իրենց աշակերտ են պատկերացնում, և բոլորը գոհ են: Այստեղ ոչ մի փորձ չի արվում գիտակցելու մարդու ոչնչություն լինելը, և եթե նույնիսկ նրանք համաձայնվեն, որ նրաք դա գիտակցում են, դա պարզապես երևակայություն է, ինքնախաբեություն, եթե ոչ չոր սուտ: Հակառակը՝ իրենց ոչնչությունը գիտակցելու փոխարեն, այսպիսի խմբերի անդամների մոտ համոզմունք է ձևավորվում իրենց շատ կարևոր լինելու և կեղծ անհատականության ձևավորման մասին:

Աշխատանքի սկզբից շատ բարդ է հասկանալ՝ գործը ճիշտ է, թե սխալ, տրված ուղղությունները տեղին են, թե ոչ: Այստեղ շատ օգտակար կարող է լինել աշխատանքի տեսական մասը, քանի որ մարդը կարող է այս տեսանկյունից ավելի հեշտ դատել: Նա գիտի, թե ինչ գիտի և ինչ չգիտի: Նա գիտի, թե ինչը կարելի է սովորել սովորական ճանապարհով, ինչը՝ ոչ: Եվ եթե նա սովորում է որևէ բան, որը սովորական ճանապարհով չի կարելի է սովորել, օրինակ՝ գրքերից, սա ինչ-որ տեղ երաշխիք է աշխատանքի գործնական մասը նույնպես արդյունք է տալիս: Բոլոր գաղտնի, հոգևոր միությունները և խմբակները կարծում են, որ նրանք նոր գիտելիք են ձեռք բերում և շատ մարդիկ կան, ովքեր դրան հավատում են:

Նորմալ կազմակերպված խմբերում հավատ պետք չէ, պարզապես մի փոքր վստահություն և այն էլ շատ կարճ ժամանակով, քանի որ որքան շուտ մարդ սկսի իր լսածը վերլուծել, այդքան լավ իր համար: Կեղծ «եսի», հիմնական հատկանիշի կամ հիմնական սխալի դեմ պայքարը պետք է կազմի աշխատանքի ամենակարևոր մասը և այն պետք է ապացուցվի գործով, այլ ոչ թե խոսքով: Այդ իսկ պատճառով ուսուցիչը յուրաքանչյուրին առանձին առաջադրանք է տալիս, որը կատարելու դեպքում հնարավոր կլինի հաղթել հիմնական սխալը: Երբ որ մարդ հետևում է իր առաջադրանքներին, նա պայքարում է ինքն իր դեմ, աշխատում է իր վրա: Եթե նա խուսափում է առաջադրանքներից, չի փորձում դրանք կատարել, դա նշանակում է, որ կամ չի ուզում աշխատել, կամ էլ չի կարող:

Սկզբում, որպես կանոն ուսուցիչը շատ հեշտ առաջադրանքներ է տալիս, որոնք նույնիսկ առաջադրանք չի անվանում, գրեթե չի խոսում դրանց մասին և տալիս է հուշման կարգով: Եթե նա տեսնում է, որ իրեն հասկանում են և իր առաջադրանքները կատարվում են, նա ացնում է ավելի ու ավելի բարդ առաջադրանքների:

Ավելի բարդ առաջադրանքները կոչվում են արգելքներ, չնայած որ դրանց բարդությունը գուտ սուբյեկտիվ է: Արգելքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հաղթահարելու դեպքում մարդը այլևս չի կարող վերադառնալ սովորական քնի, սովորական կյանքի: Եթե նա հաղթահարել է առաջին արգելքը, բայց վախենում է առաջ շարժվի հաջորդ արգելքները հաղթահարելու համար, նա կանգ է առնում այսպես ասած երկու արգելքների մեջտեղում՝ ի վիճակի չլինելով շարժվել ոչ առաջ, ոչ էլ հետ: Սա ամենավատ բանն է, որ կարող է պատահել մարդու հետ: Հետևաբար ուսուցիչը շատ զգուշությամբ է մոտենում առաջադրանքների և արգելքների հարցին, այսինքն նա առաջադրանքներ է տալիս ներքին

արգելքները հաղթահարելու համար նրանց, ում արդեն հաջողվել է պայքարել փոքր արգելքների դեմ:

Հաճախ պատահում է, որ թեկուզև ամենաչնչին արգելքի դեմ պայքարելու ժամանակ, մարդիկ դեմ են դուրս գալիս աշխատանքին, ուսուցչին, խմբի մնացած անդամներին և մեղադրում են նրանց այն ամենի մեջ, ինչ իրենք հայտնաբերում են իրենց մեջ:

Շատ հաճախ նրանք զոջում են և սկսում են մեղադրել իրենք իրենց, հետո նորից մեղադրում ուրիշներին, այնուհետև նորից զոջում: Սակայն չկա ավելի արդյունավետ միջոց պարզելու մարդու վերաբերմունքը աշխատանքի և ուսուցչի նկատմամբ, քան նրան՝ խումբը լքելուց հետո հետևելը: Երբեմն նման փորձեր մտադրված են կազմակերպվում: Մարդուն դնում են այնպիսի վիճակի մեջ, որ նա ստիպված է լինում հեռանալ և նա բոլոր իրավաունքներն ունի իր դժգոհությունն արտահայտելու ուսուցչի և ուրիշների նկատմամբ: Այնուհետև հետևում են, թե ինչպես է իրեն դրսևորելու: Հավասարակշռված մարդը ամեն ինչ հավասարակշռված կդատի, նույնիսկ եթե կարծի, որ իր նկատմամբ անարդար կամ սխալ են վարվել: Շատերը, սակայն, ցույց են տալիս իրենց բնավորության այնպիսի կողմերը, որոնք այլ իրավիճակներում երբեք էլ ցույց չեին տա: Ժամանակ առ ժամանակ այսպիսի փորձերը անհրաժեշտ են մարդու էությունը բացահայտելու համար: Քանի դեռ դու լավ ես վերաբերվում դիմացինիդ, դիմացինդ էլ կեզ է լավ վերաբերվում, բայց թե ինչպես կվարվի նա քեզ հետ, եթե իրեն մի կիչ ցավեցնես, դա անհայտ է:

Գլխավորը, այնուամենայնիվ, դա չէ: Գլխավորը իր սեփական մոտեցումն է, իր լսած մտքերին գնահատական տալը և այդ գնահատական պահել կամ կորցնելը: Երկար ժամանակ մարդը կարող է անկեղծորեն մտածել, թե ինքն ուզում է աշխատել և մեծ ջանքեր գործադրել դրա համար, այնուհետև իր ամբողջ արածը դեն գցի և նույնիսկ աշխատանքին դեմ գնա, փորձի արդարացնել ինքն իրեն, նոր մեթոդներ հնարի, միտումնավոր սխալ բաներ վերագրի իր լսածներին և այլն:

- Իսկ ի՞նչ կպատահի նրանց հետ այս դեպքում, - լսարանից հարցրեց մեկը:
- Ոչ մի բան, - ասեց Գ.-ն, - ինչ պիտի պատահի: Իրենց պատիժը հենց իրենք են: Դրանից ավելի վատ պատիժ ո՞րը կարող է լինել:
- Անհնար է ամբողջությամբ բացատրել, թե ինչպես է աշխատանքը ընթանում խմբում, - շարունակեց Գ.-ն, - մարդը պիտի անցնի դրանց միջով: Մինչ այժմ ինչ ասվել է, դրանք պարզապես հուշումներ են, որոնց իսկական իմաստը կարելի է միայն հասկանալ այն ժամանակ, մարդը շարունակի աշխատել և փորձից ելնելով հասկանա, թե ինչ է նշանակում արգելքը և ինչպիսի դժվարությունների առաջ է այն կանգնեցնում:

Ընդհանուր առմամբ, ամենադժվար արգելքը հաղթահարելը դա սուտ չխոսելն է: Մարդը այնքան շատ է խաբում ուրիշներին և ինքն իրեն, որ արդեն սկսում է դա չնկատել: Այնուամենայնիվ, այն պետք է հաղթահարել: Հաղթահարելու համար առաջին պահանջը դա նախ և առաջ ուսուցչին չխաբելն է: Մարդը պետք է որոշի կամ մեկընդմիջտ դադարել ուսուցչին խաբելը, կամ էլ հրաժարվի ամեն ինչից: Հարկ է հասկանալ, որ ուսուցիչը մի շատ բարդ գործ է հանձն առել՝ մադկային «մեխանիզմների» մաքրման և վերանորոգման գործը: Իհարկե, նա վերցնում է միայն այն «մեխանիզմները», որոնք ինքը ի գորու է վերանորոգել: Եթե որևէ կարևոր բան փչացած է «մեխանիզմի» մեջ, ապա նա հրաժարվում է աշխատել դրա հետ: Բայց նույնիսկ այդ «մեխանիզմները», որոնք ըստ էության կարող էին մաքրվել, անհուսալի են դառնում, եթե նրանք սկսում են ստել: Ուսուցչին ասած սուտը, թեկուզ և ամենաաննշան, նրանից որևէ բան

թաքցնելը, որ ուրիշն ասել է իրեն որպես գաղտնիք, կամ ինքն է ասել ուրիշին, միանգամից վերջ է դնում իրենց հետագա աշխատանքին, մանավանդ եթե նա նախկինում որևէ ջանք է գործադրել:

Պետք է հիշել մի բան: Մարդու ջանքերի հետ մեկտեղ ավելանում են իր նկատմամբ պահանջները: Քանի դեռ մարդ քիչ ջանք է գործադրել, նրա նկատմամբ պահանջները շատ մեղմ են: Որքան շատ են ջանքերը, այնքան շատ են պահանջները:

Այս էտապում մարդիկ սովորաբար մի սխալ են գործում, որը շատ հաճախ է հանդիպում: Նրանք կարծում են, թե իրենց նախկին ջանքերը կամ այսպես ասած արժանիքները իրենց որոշ առավելություններ են տալիս, կրճատում են իրենց վրա դրված պահանջները և կարող են արդարացում հանդիսանալ, եթե նրանք հետագայում չուզեն աշխատել կամ ինչ-որ բան սխալ անեն: Սա, իհարկե, բացարձակապես սխալ է: Ինչ էլ մարդ արած լինի նախորդ օրը չի կարող ներում հանդիսանալ այսօրվա համար: Հակառակը՝ եթե մեկը ոչինչ չի արել երեկ, ապա ոչ մի պահանջ չի կարող դրվել իր առջև այսօր: Եթե նա որևէ բան է արել երեկ, ապա այսօր նա ավելի շատ է անելու: Անշուշտ, սա չի նշանակում, որ ավելի լավ է ոչինչ չանել քան անել: Նա, ով ոչինչ չի անում, ոչինչ էլ չի ստանում:

Ինչպես արդեն ասել եմ, ամենաառաջին պահանջներից մեկը անկեղծությունն է: Սակայն անկեղծության տարբեր դրսևորումներ կան: Կա խելացի անկեղծություն և կա անխելք անկեղծություն, այնպես ինչպես կա խելացի և անխելք կեղծավորություն: Եվ խելացի, և անխելք կեղծավորությունը մեխանիկորեն են դրսևորվում: Բայց եթե մարդն ուզում է սովորել խելացի անկեղծ լինել, նա նախ և առաջ պետք է անկեղծ լինի իր ուսուցչի և աշխատանքի բերումով իրենից ավագների նկատմամբ: Սա կլինի «խելացի անկեղծություն»: Այստեղ հարկ է նկատել, որ անկեղծությունը չպիտի վերածվի «քիչ վերլուծելու»: Իր ուսուցչի և ուսուցչի նշանակած մարդկանց հետ կապված հարցերում քիչ վերլուծելը բացառում է հետագա որևէ համատեղ աշխատանք: Եթե նա ցանկանում է սովորել խելացի կեղծավորություն անել նա պետք է կեղծավորություն անի աշխատանքի նկատմամբ և պիտի սովորի լուռ մնալ, երբ դա պետք է աշխատանքից դուրս մարդկանց մոտ, ովքեր ոչ կարող են հասկանալ, ոչ էլ գնահատել դա: Բայց անկեղծությունը խմբի ներսում պարտադիր պայման է, քանի որ եթե մարդ շարունակի խմբում խաբել, ինչպես նա խաբում է ինքն իրեն և ուրիշներին, նա երբեք չի սովորի ճիշտը ստից տարբերել:

Երկրորդ արգելքը շատ հաճախ վախի հաղթահարումն է: Շատ հաճախ մարդը վախենում է բազմաթիվ անպետք և վերացական բաներից: Ստեր և վախ՝ ահա այն մթնոլորտը, որում սովորական մարդն ապրում է: Վախի, ինչպես և ստելու հաղթահարումը անհատական է լինում: Յուրաքանչյուրի վախերը անհատական են, որոնք միայն իրեն են բնորոշ: Այս վախերը նախ և առաջ պետք է գտնել, այնուհետև ոչնչացնել: Վախերը, որոնց մասին ես այժմ խոսում եմ, շատ հաճախ կապված են ստերի հետ, որոնք շրջապատում են իրեն: Պետք է հասկանալ, որ դա ոչ մի կերպ կապ չունի սարդերից, մկներից կամ մութ սենյակներից վախենալու հետ, կամ էլ բազմաթիվ նյարդային վախերի հետ: Ստելու և վախի դեմ պայքարը առաջին դրական աշխատանքն է, որ մարդ սկսում է կատարել:

Ընդհանուր առմամբ պետք է գիտակցել, որ աշխատանքի ժամանակ դրական ջանքերը և զոհողությունները չեն արդարացնում կամ ներում հետագայում արած սխալները: Հակառակը՝ այն մարդը, ով ոչ մի ջանք չի գործադրում կամ զոհողությունների գնում, կարող է ներում ստանալ համեմատած այն մարդու հետ, ով շատ զոհողությունների է գնացել:

Սա կարող է անարդար թվալ, բայց պետք է հասկանալ այս օրենքը: Յուրաքանչյուրի համար առանցին հաշվարկ է արվում: Նրա ջանքերը և գոհողությունները գրվում են գրքի մի կողմում, իսկ սխալները և բացթողումները՝ մյուս: Ինչ որ գրված է դրական կողմում երբեք չի կարող փոխհատուցել գրքի բացասական կողմում գրվածը: Բացասական կողմում գրվածը միայն հնարավոր է վերացնել ճշմարտության միջոցով, այսինքն՝ իր, ուրիշների և ուսուցչի նկատմամբ ամբողջովին խոստովանելու ճանապարհով: Եթե մարդ տեսնում է իր սխալը, սակայն շարունակում է արդարացնել ինքն իրեն, մի փոքր վիրավորանքը նույնիսկ կարող է վերացնել ամբողջ տարիները աշխատանքը և ջանքերը: Հետևաբար ավելի լավ է աշխատանքի ժամանակ ընդունել քո սխալը, նույնիսկ եթե դու սխալ չես: Սա նույնպես նուրբ հարց է, և պետք չէ այն չափազանցնել, հակառակ դեպքում դրա արդյունքը նորից կլինի խաբելը և վախից դրդված խաբելը»:

Մի այլ առիթով խմբակների մասին խոսելիս Գ.-ն ասեց.

«Չեմ կարծում, որ մենք կարող ենք միանգամից սկսել խմբեր կազմելուց: Խումբը մի շատ մեծ բան է: Խումբը սկսում է աշխատել կոնկրետ համաձայնեցված խնդրի շուրջ և կոնկրետ նպատակի համար: Ես պետք է վստահեմ քեզ այս աշխատանքի ժամանակ և դու էլ պետք է վստահես ինձ: Նախքան հիմնական աշխատանքը սկսելը նախապատրաստական աշխատանք պիտի տարվի: Մենք պետք է նախապատրաստենք ինքներս մեզ, որպեսզի ժամանակի ընթացքում կարողանանք խումբ դառնալ: Նախապատրաստել հնարավոր է միայն խումբ կազմելու իմիտացիա անելու միջոցով, այսինքն՝ նմանակելով նրան ներքուստ, ոչ թե արտաքինից:

Ի՞նչ է անհրաժեշտ դրա համար: Նախ և առաջ պետք է հասկանալ, որ խմբում յուրաքանչյուրը պատասխանատու է մյուսի համար: Մեկի սխալը համարվում է մնացած բոլորի սխալը: Սա է օրենքը և այս օրենքը շատ լավ հիմնավորված է, ինչպես կհամոզվեք հետագայում, որ մեկի ձեռքբերումը մնացած բոլորի ձեռքբերումն է: Միասնական պատասխանատվության օրենքը պետք է լավ հիշել: Այն իր մյուս կողմն ունի նաև: Խմբի անդամները ոչ միայն պատասխանատու են ուրիշների սխալների համար, այլև իրենց ձախողումների համար: Մեկի հաջողությունը բոլորի հաջողությունն է: Մեկի ձախողումը բոլորի ձախողումն է: Մեկի կոպիտ սխալը, օրինակ՝ հիմնական օրենքի խախտումը, անխուսափելիորեն բերում է ամբողջ խմբի լուծարմանը:

Խումբը պետք է գործի ինչպես մեկ միասնական մեխանիզմ: Այդ մեխանիզմի յուրաքանչյուր մաս պետք է իմանա մյուսի մասին և օգնի նրան: Խմբում չեն կարող սեփական շահեր լինել, որոնք դեմ են մյուսների շահերին կամ էլ խմբի շահերին, չի կարող անձնական համակրանք կամ հակակրանք լինել, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ աշխատանքի համար: Խմբի բոլոր անդամները ընկերներ և եղբայրներ են, բայց եթե նրանցից մեկը լքում է խումբը, մանավանդ եթե նա հեռացվում է խմբից ուսուցչի կողմից, նա դադարում է մնացածին ընկեր լինելուց և միանգամից դառնում է օտար մարդ և բոլոր կապերը միանգամից խզվում են: Շատ հաճախ շատ դժվար է դա անել, սակայն անհրաժեշտ է: Մարդիկ կարող է ամբողջ կյանքի ընթացքում ընկերներ լինեն, իրար հետ միաժամանակ մտնեն խմբակ իսկ հետո մեկը հեռանա խմբից: Մյուսը իրավունք չունի ընդհանրապես խոսել նրա հետ խմբի աշխատանքի մասին: Այն մարդը, ով լքել է խումբը, իրեն վիրավորված է զգում և չի հասկանում այդ ամենը և նրանք վիճում են: Որպեսզի այսպիսի հարաբերությունները բացառվեն, ամուսինների, մոր և աղջկա կամ որդու միջև, խմբում նրանք համարվում են մեկ անդամ: Այսպիսով, եթե նրանցից մեկը այլևս չի կարող

աշխատել և լքում է խումբը, նրանցից մյուսը նույնպես մեղավոր է ճանաչվում և նա նույնպես ստիպված է լինում լքել խումբը:

Դուք պետք է հիշեք, որ ես կարող եմ ձեզ օգնել այնքան, որքան դուք ինձ: Ձեր օգնությունից բացի, հատկապես սկզբում, դուք կգնահատվեք ոչ թե ձեր արած աշխատանքի դիմաց, որը գրեթե զրոյի է հավասար, այլ ըստ ձեր գործադրած ջանքերի»:

Այս ամենից հետո Գ.-ն անցավ անհատական առաջադրանքներին և մեր «հիմնական սխալներին» սահմանում տալուն: Այնուհետև, նա մեզ մի քանի առաջադրանք տվեց և մեր խումբը սկսեց աշխատել:

1917 թվականին, երբ մենք Կովկասում էինք, Գ.-ն մի քանի հետաքրքիր լրացումներ արեց խմբերի կազմավորման հիմունքների վերաբերյալ: Իմ կարծիքով ես պետք է դրանք մեջբերեմ:

«Դուք ամեն ինչ չափազանձ տեսականորեն եք ընդունում: Դուք պետք է որ ավելի շատ հասկացած լինեիք մինչ այժմ: Ոչ մի օգուտ չկա խմբի ստեղծվելուց կամ էլ որևէ խմբին անդամակցելուց: Խմբի արդյունավետությունը որոշվում է իր տված արդյունքով:

Յուրաքանչյուր մարդու աշխատանք կարող է զարգանալ երեք տարբեր ուղղություններով: Նա կարող է օգուտ տալ գործին, կարող է օգուտ տալ ինձ և կարող է օգուտ տալ ինքն իրեն: Իհարկե ցանկալի է, որ իր աշխատանքի արդյունքը անդրադառնա բոլորի վրա: Որևէ մեկում ձախողվելու դեպքում մարդը կարող է բավարարվել մյուս երկուսով: Օրինակ՝ եթե մարդ ինձ օգուտ է տալիս, դա նշանակում է նա օգուտ է տալիս նաև աշխատանքին: Կամ եթե նա օգուտ է տալիս աշխատանքին, դրանով իսկ օգուտ է տալիս ինձ: Սակայն եթե, օրինակ, նա օգուտ է տալիս աշխատանքին և ինձ, բայց չի կարող ինքն իրեն օգուտ տալ, սա շատ վատ է և դա չի կարող երկար տևել: Եթե մարդ դրանից ոչինչ չի վերցնում կամ չի փոխվում, եթե նա մնում է այնպիսին, ինչպիսին որ կար, ապա պատահաբար մնացածին օգուտ տալը հաշվի չի առնվում, և ամենակարևորը՝ այն չի կարող երկար տևել: Խումբը աճում է և փոխվում: Եթե մարդը չի աճում և չի փոխվում, նա չի կարող հասցնել խմբի աշխատանքի հետևից: Նա աշխատանքից հետ է մնում և եթե նա ինչ-որ ժամանակ օգուտ էր տալիս խմբին, այժմ կարող է վնասել նրան»:

Ես Սանկտ Պետերբուրգ վերադարձա 1916 թվականի ամռանը:

Շուտով մեր «նախապատրաստական խմբի» ստեղծվելուց հետո Գ.-ն մեզ հետ խոսեց իր տված առաջադրանքների նկատմամբ մեր ջանքերի մասին:

«Դուք պետք է հասկանաք, որ սովորական ջանքերը հաշվի չեն առնվում, միայն գերջանքերն են հաշվի առնվում: Եթե դուք չեք ցանկանում գերջանքեր գործադրել, ապա ավելի լավ է միանգամից հանձնվեք և հոգ տանեք ձեր առողջության մասին»: «Իսկ կարո՞ղ են գերջանքերը վտանգավոր լինել, - հարցրեց մարդկանցից մեկը, ով շատ ուշադիր էր իր առողջության համար»:

«Իհարկե կարող են, - ասեց Գ.-ն, - ավելի լավ է չափազանց շատ տանջվել արթնանալու համար, քան շարունակել քնած ապրել: Մյուս կողմից, այդքան էլ հեշտ չէ մահանալ ջանքերից: Մենք շատ ավելի մեծ ներուժ ունենք քան կարծում ենք, սակայն այն երբեք չենք օգտագործում: Դուք պետք է մարդկային մարմնի մեխանիզմի կազմակերպման մի շատ կարևոր հատկանիշ իմանաք: Մարդկային մեխանիզմում շատ մեծ դեր է խաղում որոշակի մարտկոցը: Կան երկու փոքր մարտկոցներ յուրաքանչյուր կենտրոնի մոտ որոնք լիցքավորված են տվյալ կենտրոնի աշխատանքի համար նախատեսված որոշակի լիցքերով:

## Նկար 41

Օրգանիզմում կա նաև մի մեծ մարտկոց, որը սնուցում է փոքր մարտկոցները: Փոքր մարտկոցները միացված են մեկը մյուսին, որոնցից յուրաքանչյուրն էլ միացված է իր մոտ գտնվող կենտրոնին, ինչպես նաև մեծ մարտկոցին»:

Գ.-ն նկարեց «մարդկային մեխանիզմի» սխեման և ցույց տվեց մեծ և փոքր մարտկոցների տեղերը և նրանց մեջ եղած կապը:

## Նկար 42

«Մարտկոցները հետևյալ կերպ են աշխատում, - նա ասեց: - Եկեք ենթադրենք, որ մարդը գործ է անում կամ մի շատ բարդ գիրք է կարդում, որը փորձում է հասկանալ, որի դեպքում բազմաթիվ «գնդիկներ» են պտտվում գլխում մտածողական ապարատի կենտրոնում: Կամ ենթադրենք, որ նա սար է բարձրանում և սկսում է հոգնել, որի դեպքում «գնդիկները» սկսում են շարժվել շարժողական կենտրոնում:

Առաջին դեպքում ինտելեկտուալ, իսկ երկրորդ դեպքում շարժողական կենտրոնները անհրաժեշտ էներգիա են վերցնում փոքր մարտկոցներից: Երբ մարտկոցը գրեթե լիցքաթափված է, մարդը հոգնածություն է զգում: Նա ուզում է կանգնել, նստել, եթե նա քայլում է, կամ էլ ինչ-որ այլ բանի մասին մտածի, եթե նա որևէ խնդրի մասին է մտածում: Բայց հանկարծ նա զգում է, թե ինչպես է նա նորից ուժ հավաքում և նորից ի վիճակի է քայլել կամ աշխատել: Սա նշանակում է, որ կենտրոնը միացել է երկրորդ մարտկոցին և նրանից է սնուցվում, մինչ առաջին մարտկոցը լիցքավորվում է մեծ մարտկոցից: Կենտրոնի աշխատանքը շարունակվում է և մարդը շարունակում է քայլել կամ աշխատել: Երբեմն այս կապը ապահովելու համար մի փոքր հանգիստ է պետք, իսկ երբեմն էլ ցնցում կամ ջանքեր են հարկավոր: Ինչևէ, աշխատանքը շարունակվում է: Որոշ ժամանակ անց երկրորդ մարտկոցի լիցքերը գրեթե սպառվում են և մարդ նորից հոգնում է:

Նորից մեկ ցնցում, մի կարճ հանգիստ, մի հատ ծխախոտ կամ մի քիչ ջանքեր և նա նորից միանում է առաջին մարտկոցին: Մակայն շատ հաճախ այնպես է լինում, որ կենտրոնը այնքան շուտ է սպառում երկրորդ մարտկոցի էներգիան, որ առաջին մարտկոցը միայն կիսով չափ է հասցնում լիցքավորվել գլխավոր մարտկոցից: Կապնվելով առաջին մարտկոցին՝ կենտրոնը սկսում է սնուցվել դրանից, մինչ երկրորդ մարտկոցը սնուցվում է մեծ մարտկոցից: Մակայն կենտրոնը շատ արագ սպառում է առաջին մարտկոցի էներգիան, որի ընթացքում մյուս մարտկոցը հասցնում է լիցքավորվել քառորդ չափով: Կենտրոնը միանում է դրա հետ, արագ սպառում է դրա մեջ եղած ամբողջ էներգիան և կենտրոնը նորից միանում է առաջին մարտկոցին և այլն: Որոշ ժամանակ անց օրգանիզմը այնպիսի մի վիճակի է գալիս, որ մարտկոցներից ոչ մեկում էներգիա չի մնում: Այդ ժամանակ մարդն իսկապես շատ հոգնում է: Նա գրեթե գետնին է տապալվում, ուզում է քնել, այլապես իր օրգանիզմը վարակվում է, նա սկսում է գլխացավ և սրտխառնոց ունենալ, կամ էլ հիվանդանում է:

Այնուհետև, հանկարծ մի փոքր հանգստից, ցնցումից կամ էլ ջանքերից հետո մարդ նորից էներգիա է ստանում և նորից ի վիճակի է մտածել, քայլել կամ աշխատել: Սա նշանակում է, որ կենտրոնը միանցել է միանգամից մեծ մարտկոցին: Մեծ մարտկոցը ահռելի քանակությամբ էներգիա է պարունակում: Միանալով միանգամից մեծ մարտկոցին՝ մարդ կարող է

բառացիորեն հրաշքներ գործել: Իհարկե, եթե «գնդիկները» շարունակեն աշխատել և մեծ մարտկոցի էներգիան, որ ստացվում է օդից, ուտելիքից, տպավորություններից, ավելի մեծ արագությամբ սպառվի, քան այն վերականգնվում է, օրգանիզմը կմահանա: Մակայն նման դեպքեր շատ հազվադեպ են պատահում: Սովորաբար օրգանիզմը դադարում աշխատել սրանից շատ առաջ: Հատուկ պայմաններ են հարկավոր, որպեսզի օրգանիզմին ստիպեն մահանալ էներգիայի կորստից: Սովորաբար մարդը քուն է մտնում կամ ուշագնաց է լինում, կամ էլ մեկ այլ արտաքին ազդեցության տակ դադարում է աշխատել իրական վտանգից դեռ շատ առաջ:

Հետևաբար պետք չէ վախենալ ջանքեր գործադրելուց: Դրանից մահանալու վտանգը չափազանց քիչ է: Ավելի հեշտ է մահանալ անգործությունից, ծուլությունից և ջանք չգործադրելուց:

Ընդհակառակը՝ մեր նպատակն է անհրաժեշտ կենտրոնը մեծ մարտկոցին միացնել սովորելիք: Քանի դեռ մենք անկարող ենք դա անել, մեր արած ամբողջ աշխատանքը անօգուտ է, որովհետև մենք կքնենք նախքան մեր ջանքերը որևէ արդյունք կտան:

Փոքր մարտկոցները բավականացնում են միայն ամենօրյա աշխատանքի համար, սակայն իր վրա աշխատելու համար, ներքին բարելավման համար և այն ջանքերի համար, որ հարկավոր է այն մարդուն, ով ընտրում է այդ ուղին, փոքր մարտկոցների էներգիան բավարար չէ: Մենք պետք է սովորենք ինչպես էներգիա ստանալ մեծ մարտկոցից:

Այնուամենայնիվ, սա հնարավոր կլինի միայն զգայական կենտրոնի օգնությամբ: Շատ կարևոր է այն ճիշտ հասկանալ: Մեծ մարտկոցի հետ կապը հնարավոր է միայն զգայական կենտրոնի միջոցով: Ենթազիտակցական, շարժողական և մտավոր կենտրոնները առանձին վերցված կարող են սնուցվել միայն փոքր մարտկոցներից:

Հենց սա է, որ մարդիկ չեն հասկանում: Հետևաբար, նրանց նպատակը պետք է լինի զգայական կենտրոնի գործունեության բարելավումը: Զգայական կենտրոնը մի ապարատ է, որը շատ ավելի կայուն է, քան մտավոր կենտրոնը, հատկապես եթե հաշվի առնենք, որ մտավոր կենտրոնում միայն ձևակերպման ապարատն է, որ աշխատում է և մտավոր կենտրոնին շատ բաներ հասանելի չեն: Եթե մարդ ուզում է ավելին իմանալ և հասկանալ, նա պիտի հիշի, որ նա կարող է նոր գիտելիք ստանալ ոչ թե մտավոր կենտրոնից, այլ զգայական կենտրոնից»:

Մարտկոցների մասին խոսելիս Գ.-ն շատ հետաքրքիր ակնարկներ արեց հորանջելու և ծիծաղելու մասին:

«Օրգանիզմում կատարվող երկու գործընթաց գոյություն ունի, որը գիտական տեսանկյունից հնարավոր չէ բացատրել, չնայած ըստ էության գիտությունը չի ընդունում դրանց անբացատրելի լինելը: Դա հորանջելն ու ծիծաղելն է: Ոչ մեկը և ոչ էլ մյուսը չեն կարող ճիշտ ընկալվել և բացատրվել առանց մարտկոցների մասին գիտելիք ունենալու և օրգանիզմում դրանց դերի մասին տեղեկություն ունենալու:

Հավանաբար նկատել էք, որ հենց հոգնում էք, դուք սկսում էք հորանջել, հատկապես սարերի վրա, երբ մարդ անսովոր է այդ միջավայրին, նա սկսում է անընդհատ հորանջել սարը բարձրանալիս: Հորանջելիս էներգիա է փոխանցվում փոքր մարտկոցներին: Երբ որ նրանք արագ դատարկվում են մինչ մյուս մարտկոցը դեռ չի հասցրել վերալիցքավորվել, մարդ սկսում է շարունակաբար հորանջել: Որոշակի պայմանների դեպքում հնարավոր է սրտի աշխատանքը կանգ առնի, օրինակ երբ մարդ ուզում է հորանջել, բայց չի կարողանում, կամ էլ երբ խափանվում



է «պումպը», այսինքն մարդը հորանջում է, սակայն դա ոչ մի արդյունք չի տալիս և հորանջելուց մարտկոցները էներգիայով չեն սնուցվում:

Հորանջելու ուսումնասիրությունները այս տեսանկյունից շատ նոր և հետաքրքիր բաներ կարող են բացահայտել:

Ծիծաղը նույնպես անմիջականորեն կապված է մարտկոցների հետ, բայց այն կատարում է հորանջելու հակառակ ֆունկցիան, այսինքն՝ այն ոչ թե էներգիա է քաշում մեծ մարտկոցից, այլ դուրս է մղում մարտկոցներում կուտակված ավելորդ էներգիան: Ծիծաղը բոլոր կենտրոններում չէ, որ առկա է: Այն կա միայն այն կենտրոններում, որոնք բաղկացած են երկու կեսից՝ դրական և բացասական: Եթե սրա մասին ես դեռ մանրամասն չեմ խոսել, ապա դեռ մենք կվերադառնանք կենտրոնների մանրամասն ուսումնասիրությանը: Այժմ մենք միայն կանդրադառնանք մտավոր կենտրոնին: Կարող են տպավորություններ առաջանալ, որոնք միանգամից կազդեն կենտրոնի երկու մասի վրա միաժամանակ և կառաջանա կտրուկ «այո» և «ոչ»: Նրանց միաժամանակ առաջացումը ցնցման են ենթարկում կենտրոնը, և չկարողանալով համատեղել էներգիաների միաժամանակ հոսքը՝ կենտրոնը ծիծաղի միջոցով դրանք դուրս է մղում մարտկոցից, որի սնուցման հերթն է: Նաև պատահում է այնպես, որ մարտկոցը չափից դուրս էներգիա է հավաքում, որը կենտրոնը ի վիճակի չէ օգտագործել ամբողջությամբ: Այդ ժամանակ յուրաքանչյուր ամենահասարակ տպավորությունն անգամ կարող է կրկնակի ազդեցություն ունենալ և այդպիսով ընկնել միանգամից երկու կեսերի վրա, որից կգոյանա ծիծաղ, այսինքն՝ էներգիայի սպառում:

Դուք պետք է հասկանաք, որ ես ձեզ միայն կադապարն եմ ներկայացնում: Պետք է հիշել, որ և հորանջելը, և ծիծաղը վարակիչ են: Դա նշանակում է, որ դրանք բնագոյային և շարժողական կենտրոններում կատարվող շատ կարևոր երևույթներ են»:

«Ինչու՞ է ծիծաղը այդքան հաճելի, - հարցրեց ներկաներից մեկը»: «Որովհետև, - պատասպանեց Գ.-ն, - ծիծաղը սպառում է մեր ավելորդ էներգիան, որը չսպառվելու դեպքում կարող է բացասական էներգիա դառնա, որը ինքնին թույն է: Թույնը մեր մեջից երբեք էլ չի պակասում, իսկ ծիծաղը մեր հակաթույնն է: Բայց այս հակաթույնը մեզ անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ մենք չենք կարող սպառել մեր մեջ կուտակված էներգիան մի օգտակար բանի վրա: Ասում են, որ Քրիստոս երբեք չի ծիծաղել: Եվ, իսկապես, Ավետարաններում ոչ մի փաստ չէք կարող գտնել:

Սակայն չծիծաղելու տարբեր պատճառներ կարող են լինել: Կան մարդիկ, ովքեր չեն ծիծաղում, որովհետև նրանք ամբողջությամբ լցված են բացասական էներգիայով, չարությամբ, ատելությամբ, վախով և թերահավատությամբ: Կան նաև մարդիկ, ովքեր չեն ծիծաղում, քանի որ նրանք չեն կարող բացասական էներգիա ունենալ: Մի բան լավ հասկացեք: Ավելի բարձր կենտրոններում ծիծաղ չի կարող գոյություն ունենալ, քանի որ բարձր կենտրոններում որևէ բաժանում չկա և չկա «այո» կամ «ոչ»: